26.10.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2020 թվականի N 1723 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 342-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԷՄԿՈ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 342-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին տողի «Քանակը» սյունակի «8000» թիվը փոխարինել «13000» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «30 400 000» թիվը՝ «49 400 000» թվով.

2) 2-րդ տողի «Քանակը» սյունակի «4000» թիվը փոխարինել «14000» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «17 280 000» թիվը՝ «60 480 000» թվով.

3) 5-րդ տողի «Քանակը» սյունակի «5000» թիվը փոխարինել «8000» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «7 167 050» թիվը՝ «11 667 050» թվով.

4) 13-րդ տողի «Քանակը» սյունակի «1000» թիվը փոխարինել «1500» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «1 955 000» թիվը՝ «2 932 500» թվով.

5) 14-րդ տողի «Քանակը» սյունակի «1000» թիվը փոխարինել «3000» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «6 050 000» թիվը՝ «18 050 000» թվով.

6) հավելվածը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-20-րդ կետերով՝

«15.	2930909509	Դիմեթիլ սուլֆօքսիդ	Անգույն հիդրոսկոպիկ հեղուկ, բնորոշ հոտով	կգ	2000	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	3 360 000
16.	2841610000	Կալիումի պերմանգանատ	Մուգ մանուշակագույն մանրաբյուրեղ մետաղական փայլով	կգ	2000	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	4 800 000
17.	2930909509	Իխթամոլ	Մածուցիկ սևաշագանա-կագույն հեղուկ	կգ	300	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	2 520 000
18.	2935909009	Սուլֆացետամիդի նատրիումական աղ /Ալբուցիդ/	Սպիտակ կամ դեղնասպիտա-կավուն բյուրեղական փոշի	կգ	3000	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	45 000 000

19.	2925290000	Քլորհեքսիդին բիգլյուկոնատ	Թափանցիկ հեղուկ	կգ	3000	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	21 600 000
20.	2925199500	Քլորհեքսիդին դիացետատ	Սպիտակ միկրոբյուրե-ղային փոշի	կգ	200	Հնդկաստան, Չինաստան, Եվրոպա	4 800 000».

7) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «390 985 539» թիվը փոխարինել «552 743 039» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ